«Մենթոր հաստատությունների ընտրության և մենթորական աշխատանքներ իրականացնողների գործառույթները սահմանելու մասին» Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրաման

ՄԵՆԹՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵՆԹՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝ մենթոր հաստատությունների (նախադպրոցական) ընտրության կարգը՝

համաձայն Հավելված 1-ի:

2. Սահմանել մենթորական աշխատանքներ իրականացնողների գործառույթները՝ համաձայն Հավելված 2-ի:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված 1

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի

նախարարի 2025 թվականի -ի N –Ն հրամանի

ԿԱՐԳ

ՄԵՆԹՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ) ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են նախադպրոցական մենթոր ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ հաստատություն) ընտրության հետ կապված իրավահարաբերությունները:
2. Մենթոր հաստատություններն ընտրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N 744-Ն որոշմամբ հաստատված «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի» ներդրման, հաստատությունների բովանդակային արդյունավետ համագործակցության և լավագույն փորձի փոխանակման համար:
3. Մենթոր հաստատությունների ցանկը (այսուհետ՝ ցանկ) հաստատվում է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով և վերանայվում է առնվազն 3 տարին մեկ անգամ:
4. Ցանկը ձևավորվում է՝ հիմք ընդունելով «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) կողմից ներկայացված առաջարկությունները:
5. Ցանկում ընդգրկվելու համար հաստատությունը պետք է բավարարի հետևյալ չափանիշներին՝

- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի մարտի 27-ի N 20-Ն հրամանով հաստատված նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների անվանացանկին և պաշտոնների նկարագրերին համապատասխան համակազմի առկայություն (առնվազն 90 %).
- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի մարտի 2-ի N 16-Ն հրամանով սահմանված կարգով տարակարգ ստացած մանկավարժական համակազմի առկայություն (առնվազն 30 %).
- նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով և դիդակտիկ պարագաներով հագեցվածություն:

6. Հաստատությունը ցանկից հանելու հիմքերը.

- հիմնադրամի կողմից հաստատության գործունեության մշտադիտարկման ամենամյա հաշվետվությունը.
- Կրթության տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքները.
- հաստատության գործունեության կասեցումը:

7. Մենթոր հաստատությունների թիվը յուրաքանչյուր մարզում առնվազն 2-ն է, Երևան քաղաքում՝ 4-ը:
8. Ըստ անհրաժեշտության՝ ցանկը պարբերաբար կարող է թարմացվել:

Հավելված 2

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի

նախարարի 2025 թվականի -ի N –Ն հրամանի

ԿԱՐԳ

ՄԵՆԹՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Սույն կարգով կարգավորվում են մենթորական աշխատանքների իրականացման հետ կապված իրավահարաբերությունները:
2. Նախադպրոցական Մենթոր ուսումնական հաստատություններին (այսուհետ՝ հաստատություն) կցված նախադպրոցական ուսումնական հաստատությունների ցանկը (այսուհետ՝ ցանկ) հաստատվում է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով և, ըստ անհաժեշտության, վերանայվում է ամեն տարի՝ մինչև մայիսի 30-ը:
3. Հաստատությունն իրեն կցված նախադպրոցական ուսումնական հաստատությունների հետ համագործակության շրջանակում՝

- իրականացնում է վերապատրաստումներ, խորհրդատվություններ և մշտադիտարկումներ՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի և նախադպրոցական կրթական հիմնական ծրագրերի ներդրման, մանկավարժական աշխատողների

մասնագիտական զարգացման ուղղություններով.
- կազմակերպում է մանկավարժական աշխատողների համար բովանդակային և մեթոդական բնույթի աջակցություն.
- ապահովում է հետադարձ կապ մեթոդամանկավարժական, բովանդակային, կառավարման ուղղություններով իրականացվող աշխատանքներում։

4. Մենթորական աշխատանքների իրականացման համար հաստատությունը տվյալ մարզի նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի մարտի 27-ի N 20-Ն հրամանով հաստատված նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների անվանացանկին և պաշտոնների նկարագրերին համապատասխան՝ մանկավարժական աշխատողներից առաջադրում է նախադպրոցական կրթության մենթորի (այսուհետ՝ մենթոր) 5 թեկնածու։
5. Մենթորների ընտրությունը կատարվում է «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) կողմից՝ հարցազրույցի միջոցով։
6. Մենթորական աշխատանքներն իրականացվում են ծրագրի ղեկավարի՝ հաստատության տնօրենի, համակարգողի, մենթորի, հաստատության հաշվապահի միջոցով։
7. Ծրագրի ղեկավարը՝

- կազմում է մենթորների հավակնորդների ցանկը և մինչև մայիսի 30-ը ներկայացնում հիմնադրամին.
- կազմում է մենթորական աշխատանքների պլանը և ժամանակացույցը և հիմնադրամի հետ համաձայնեցնելուց հետո մինչև մարտի 30-ը հաստատում.
- համակարգում է մենթորների աշխատանքները՝ պլանի և ժամանակացույցի համապատասխան.
- ապահովում է սահմանված աշխատանքների կատարումը՝ հիմնադրամի հետ կնքված պայմանագրի պահանջներին համապատասխան.
- իրականացնում է մենթորների աշխատանքի մշտադիտարկում և գնահատում.
- համակարգում է հաշվետությունների կազմման և սահմանված ժամկետներում ներկայացման աշխատանքները.
- հավաքագրում և հիմնադրամին է ներկայացնում աշխատանքների ընթացքում առաջացած խնդիրները.
- ապահովում է հետադարձ կապ հիմնադրամի և մենթորների միջև.
- իրականացնում է մենթորական աշխատանքներ.
- կարող է հանդես գալ նաև որպես ծրագրի համակարգող։

8. Մենթորը սահմանված ժամանակացույցի համաձայն՝

- ցանկում ընդգրկված նախադպրոցական հաստատությունների մանկավարժական աշխատողների համար իրականացնում է վերապատրաստումներ, խորհրդատվություններ, մասնագիտական աջակցություն, մշտադիտարկումներ՝ նպաստելով նախադպրոցական

կրթության պետական կրթական չափորոշչի և նախադպրոցական կրթական հիմնական ծրագրերի ներդրմանը, մանկավարժական աշխատողների շարունակական մասնագիտական զարգացմանը.
- հավաքագրում, վերլուծում և ծրագրի ղեկավարին է ներկայացնում մանկավարժական աշխատողների կողմից նախադպրոցական կրթության բովանդակության լավարկմանն ուղղված առաջարկներ.
- կազմում և ներկայացնում է կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ:

9. Ծրագրի համակարգողը՝

- ապահովում է հիմնադրամի և մենթորների հետ պայմանագրերի (համաձայնագրերի) կնքումը.
- ապահովում է մենթորների կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունների պատշաճ ներկայացումը.
- վերահսկում է պայմանագրերի (համաձայնագրերի) կետերի կատարումը:

10. Հաստատության հաշվապահը՝

- ծրագրի ղեկավարի և մենթորների հետ կնքում է ծառայությունների մատուցման պայմանագրեր (համաձայնագրեր).
- «Պետական եկամուտների կոմիտե» համակարգում ապահովում է տվյալ ծրագրի աշխատակիցների գրանցումները.
- իրականացնում է պայմանագրերով նախատեսված վճարումները.
- ապահովում է ֆինանսական հաշվետվությունների որակը: